К сожалению, в отличие от Михаила Тимченко, многие на Кубани запоминают лишь связанные с армянами негативы. Глупо было бы утверждать, что все наши соотечественники, живущие в Краснодарском крае, ведут себя блестяще. Есть среди местных армян и хулиганы, и преступники, и казнокрады. Но лучше доверимся статистике, которая вскрывает весьма интересные факты. В позапрошлом году во время визита в Краснодар президента Армении Роберта Кочаряна начальник главного управления МВД России по Краснодарскому краю генерал-лейтенант Сергей Кучерук заявил, что по показателям преступности армяне находятся на 18-м (!) месте. Это при том что армяне — вторая по численности этническая группа края. И еще один интересный факт, о котором свидетельствует уже сводка Налоговой инспекции. Оказывается, предприятия, возглавляемые этническими армянами, обеспечивают поступление 38 процентов доходной части бюджета Краснодарского края. Это при том что наших соотечественников на Кубани, по разным данным, от семи до одиннадцати процентов. Так может, действительно стоит уважать кубанских армян, раз они законопослушные граждане и аккуратные налогоплательщики?..

Краснодар, Новороссийск, Анапа, Хоста — Ереван

## В СОЧИ ЗАДЕРЖАН ВАНДАЛ, КРУШИВШИЙ АРМЯНСКИЕ И РУССКИЕ МОГИЛЫ

29 июля 2005 г. на кладбище, расположенном в горном массиве в пяти километрах от пос. лка Верхний Юрт (Хостинский р-он, г. Сочи) было разрушено 29 могил. В течение нескольких недель подовные случаи повторялись с нарастающим постоянством: 13 августа - уничтожено 10 надгробий на кладбище села Раздольное, 19 августа - 7 надгробий в селе Богуповка, 2 сентября разрушено 52 надгробия на кладбище села Прогресс Хостинского района. Во всех случаях разрушались могилы, принадлежавшие армянам и русским.



Как сообщили корреспонденту ИА REGNUM в УВД города Сочи, после первого же происшествия, ОВД Хостинского района возбудило уголовное дело по ст. 244 УК Российской Федерации "Нарушение над телами умерших и местами их захоронения". Всего за неполный месяц "деятельности" неизвестного злоумышленника, на различных кладбищах, расположенных преимущественно в отдаленных селах Хостинского района, разрушено 98 надгробий.

По сообщению того же источника, в числе многих, правоохранительными органами рассматривалась и версия о попытках разжигания межнациональной и межрелигиозной розни, однако, она не являлась в расследовании основной. Почти на каждой из оскверненных могил были обнаружены записки сделанные на тетрадных листах с надписями "Шизофрения", на некоторых надгробьях надписи были сделаны мелом. Кроме того, на некоторых могилах была начерчена свастика, были еще некоторые надписи, которые не разглашались в интересах следствия.

Преступление имело вольшой общественный резонанс, и на установление личности вандала были брошены все силы сочинской милиции. Силами подразделений участковых уполномоченных было организовано постоянное дежурство на кладбищах, маршруты патрулирования ППС - максимально приближены к местам наиболее вероятного совершения очередного преступления. Оперативная работа велась в нескольких направлениях: помимо оперативно-розыскной деятельности по раскрытию данного преступления, которую вели оперативники уголовного розыска, следователями, на основе имеющихся данных, был составлен очень подробный психологический портрет предполагаемого преступника. Судя по характеру надписей, почерку и грамматическим ошибкам, лингвисты сделали вывод, что, в вероятнее всего, преступником является представитель одной из кавказских национальностей. Об этом свидетельствовали характерные ошибки в написании парных гласных звуков, отсутствие "мягких знаков" в тех словах, где они предусмотрены орфографией - то есть писавший придерживался принципа "как слышу - так и пишу". Кроме того, велась работа в архивах различных медицинских учреждений города - выявлялись лица, которым в течение последних 30 лет ставился диагноз "шизофрения".

Пресс-службой УВД Сочи проводился и анализ всех телефонных звонков, предположительно поступивших в милицию от психически неуравновешенных лиц, в которых могли бы звучать некоторые ключевые

вые слова из надписей, оставленных на разрушенных надгробьях. Комплексный подход, примененный сотрудниками сочинской милиции при раскрытии общественно значимого преступления, принес результаты, а окончательная точка была поставлена после эпизода, произошедшего в минувшую пятницу на кладбище села Прогресс. На одном из оскверненных надгробий вандалом была оставлена надпись, полностью идентичная фразе, произнесенной одним из людей, звонившем в УВД Сочи в начале июня 2005 года. Именно эти слова и дали

сочинским милиционерам ключ к окончательному раскрытию преступления.

В разговоре звонивший назвал только свое имя. Но, даже обладая таким минимумом информации, сочинские милиционеры уже к вечеру 2 сентября установили личность предполагаемого преступника. Им оказался местный житель 1975 года рождения. По данным источника, пожелавшего остаться неизвестным, задержанный - грузин по национальности. Место постоянного проживания - Центральный район города, однако при опросе соседней оперативники уголовного розыска установили, что после смерти матери, подозреваемый проживает у своих родственников, в одном из сел Хостинского района города. Это также косвенно подтверждало причастность подозреваемого к фактам вандализма - если посмотреть по карте, от дома, где он проживал до лового из кладбищ, на которых были разрушены надгробья всего 1,5 - 2 км пешком по проселочной дороге. Таким образом, дом, в котором проживал подозреваемый, находился как бы в эпицентре событий. У сотрудников милиции почти не оставалось сомнений, что злоумышленник, варварски разрушивший 98 надгробий на четырех сельских кладбищах - найден.

После того, как адрес временного проживания злоумышленника был установлен, оперативники уголовного розыска произвели задержание. Сопротивления преступник не оказал. При осмотре комнаты, в которой он жил, на стенах были обнаружены надписи: "В Новый год уничтожить церковь", "На гору Джомолунгма на ГАЗ-66 с американским флагом через 3 года". Почерк и грамматические ошибки - идентичны с надписями "Шизофрения", оставленными на поврежденных могилах. Задержанный был доставлен в ОВД Хостинского района города, где вскоре начал давать признательные показания.

Как отмечают сотрудники сочинской милиции, некоторые особенности поведения задержанного позволяют предполагать наличие у него психических отклонений. В рамках расследования уголовного дела будет назначена судебно-психиатрическая экспертиза. По предварительным данным, факты вандализма являются следствием серьезного психического заболевания задержанного, а также нескольких психологических травм, полученных им еще в детском возрасте. Согласно показаниям задержанного, полученным в ходе предварительного следствия, при разрушении могил и надгробий он не преследовал никаких национальных, религиозных или политических целей. Не отрицает он и своей волезни - как оказалось, он долгое время лечился в психо-неврологическом диспансере, но не знал своего диагноза, однако в случайном разговоре с родственниками услышал о том, что у него "шизофрения", после чего у него, вероятно, и начался кризис. Задержанный рассказал, что долгое время увлекался восточными религиями - индуизмом, буддизмом и т.д. Изображение свастики на оскверненных надгробьях - результат именно этого увлечения, и не является пропагандой национализма или фашизма.



Համշենահայ ֆիդայիների պատմությանը սկսել են զբաղվել 1950 թվականից, երբ տասնվեց տարեկան էի: Չարդից հրաշքով ազատված փախստականներից և ֆիդայիներից ոմանք այն տարիներին դեռ ողջ էին: Հանդիպելով նրանցից շատերի հետ, լսելով նրանց պատմածները, դրանք համեմատելով իրար հետ, գրել են նրանց պատմությունը Մեծ Եղեռնի մասին, որպեսզի այն չկորչի, ինչպես կորել են համշենահայ պատմության շատ էջեր: Այդ որոնումներիս արդյունքներն են «Համկիրիչների երգը» վիպակը, որը լույս է տեսել 1997թ., Երևանում, «Մահապարտների պարը» վեպս, որը նոր են ավարտել և ուրիշ գործեր, որոնք դեռ կիսատ են: Վերջերս կարդացի Միսաք Թուրքլյանի «Օրերուս հետ» (Լոս Անջելես, 1953թ.) գիրքը, որի 266-րդ էջում Սերոբ Կարաբեախյանի և Գալուստ Քեսուեյանի մասին գրված է. «Տասը տարիներ տևող կռիվներուս ընթացքին, ողջ կման միայն վերջին երկու ղեկավարները: Այս վերջինները 1923-ի հոկտեմբերին իրենց հետ ունենալով նոր ղեկավար Հարություն Թարակճեան, կրճատված թուրքական նավակներ և կին ու երեխայով, մոտ յոթը հարյուր հոգի, Սև ծովը ձեռքբերելով, դուրս կուզան ռուսական ափը»: Այստեղ լցվեց համբերության բաժակը, որոշեցի թողնել ամեն ինչ և գրել սույն հոդվածը, որպեսզի հետո ուշ չլինի, որ պարզվի ճշմարտությունը...

Որոնումներիս մի օր, երբ Մարիամ տատիկը պատմում էր խմբապետ Ավետիս Չարյանի մասին, ասաց.

- Այն խելոք ու հեռատես մարդու սպանվելուց հետո Սերոբ Կարաբեախյանն ինքնազուլու դարձավ խմբապետ,- և մի պահ լռելուց հետո շարունակեց,- այն, ինչպես ասում են...,- և կրկին լռեց՝ լսողի մեջ տարբեր կարծիքներ առաջացնելով նրա նկատմամբ: Բայց ինչո՞ւ այլևս չխոսեց նրա մասին. այդ հարցը մնում էր անզոյաբան: Ֆիդայիներից ու փախստականներից ում էլ հարցնում էի, ոչ ոք չէր ուզում պատմել Սերոբի մասին. խոսյա էին տալիս: Բայց մի օր ինձ հաջողվեց համոզել խաչատրյան Դանիելին, որ պատմի Սերոբի մասին՝ հանուն համշենահայ ֆիդայիների պատմության ճշմարիտ ամբողջականության: Նա մի պահ մտածելուց հետո ասաց.

- Կարճ կպատմեմ և այդ մասին այլևս ոչ մի խոսք: Ոչ ոք չի ուզում խոսել ու պատմել Սերոբի մասին, որովհետև նրա քրոջ ամուսնու՝ Ավետիս Չարյանի սպանությունն ընկած է նրա խղճի վրա... կամ նրա ձեռքով է սպանվել,- և լռեց՝ հասկացնելով, որ այդ մասին այլևս ասելիք չունի: Ամառ էր, բայց սարսուռը պատեց ինձ: Այլևս հարցեր տալու իրավունք չունեի, այդպես էր պայմանը: Տարիներ էին անցել այն օրից: Մի անգամ, երբ Պրիմորսկոյե գյուղում Մուսջյանների տանը նստած խոսում էի Կարապետի այրու՝ Քարգուհի տատիկի հետ, կրկին խոսք բացեցի Սերոբի մասին: Նա ասաց.

- Եթե Կարաբեախյան Սերոբի կյանքի պատմությունն այդքան հետաքրքրում է քեզ, ինչո՞ւ ես եկել այսքան հեռու, նրա քույրը, որ Ավետիս Չարյանի կինն էր, դեռ կենդանի է, ապրում է Գագրայում: Գնա նրա մոտ, նա անկասկած ամեն ինչ գիտի և կպատմի քեզ:

- Ի՞նչ,- համարյա ճշալով հարցրեցի ես: - Այո՛, տղաս,- հանգստացնող տոնով շարունակեց խոսքը:- Նա ապրում է Վաժա Փշավելու փողոցում, բայց տան համարը չեն հիշում: Երբ գնաս նրանց տուն, իմ ամուսնից շատ ու շատ բարկիր Աննիկ քույրիկին: Ասա, որ շատ են կարոտել նրան, շա՛տ ու շա՛տ...

Երկու օր հետո գնացի Գագրա: Իրենց համեստ տան պատշգամբում, սեղանի կողքին նստած, սև ու կարմիր ծաղկաշալով գլուխը կապած, ձեռագործով էր զբաղ-

ված Աննիկ մորաքույրը: Չսպասելով հրավերի, բարձրացա պատշգամբ, բարևեցի: Աննիկ մորաքույրն աչ ձեռքն աչքերին հովանի արած, նայեց, նայեց և ասաց.

- Բայց ես քեզ չճանաչեցի, չհիշեցի, թե ով ես:

Ես ասացի, որ իզուր չհարչարվի ինձ հիշելու համար, մենք առաջին անգամ ենք տեսնվում:

- Որ այդպես է, ինչո՞ւ եկար մեր տուն, ի՞նչ ես ուզում,- կատակախառն հարցրեց Աննիկ մորաքույրը և ուզեց վեր կենալ տեղից: Բայց ես ասացի, որ չանհանգստանա ու աթոռն առաջ բերելով նստեցի նրա դիմացը՝ սեղանի մոտ և բացատրեցի, որ շատ են սիրում հանդիպել տարիքավոր, աշխարհի տեսած մարդկանց հետ, պատմել տալ իրենց կյանքից, և այլև, և այլև:

- Թե որ այդպես է, խոսենք,- ժպտալով ասաց մորաքույրը,- տեսնենք ի՞նչ եք ուզում լսել ու իմանալ:

Սկսվեց մեր գրույցը: Մեկ ժամ հետո,


**ՋՈՐԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ**  
արձակագիր, Ցանդրիիչ, Աբխազիա

**ՈՐ ԻՄԱՆԱՆՔ ԳՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ**

Երբ դուրս եկա փողոց ու մոլոր քայլերով գնում էի ավտոկանգառ, մտածում էի, թե ինչպե՞ս ինձ հաջողվեց խոսակցիս թևից բռնած տանել-հասցնել նրա կորցրած հայրենիքը, ուր Եղեռնի օրերին մի քանի տարի ապրել էին սար ու ձորերում, տեսել արյուն ու մահ: Ջրույցի ժամանակ մի պահ լռելուց հետո ուղիղ աչքերիս մեջ նայելով, հարցրեց. «Զլինի՞ թե դու էլ լսել ես, որ իմ ամուսնուն՝ Ավետիս Չարյանին սպանել է եղբայրս՝ Սերոբը»: Չմայած ժամը էր պահը, բայց ներքուստ հանգիստ զգալով, որ հասա նպատակիս, պատասխանեցի. «Այո՛, հենց այդ հարցը պարզելու համար է, որ

տոնյաներիս, բայց ինչի՞ց, ինչի՞ համար, չգիտեմ, և ինչպես ասում են, ապրում էինք մեկ ոտքերս տանը, մյուսը՝ սարերում... Այն օրն առավոտյան Ավետիսը տուն եկավ հոգնած ու քնատ, ասաց. «Ոչ ոքի չասես, որ տանն եմ: Շատ են հոգնել, ուզում են երկու օր ու գիշեր քնեն, հանգստանան»,- պառկեց իմ բացած անկողնում, ինչպես միշտ, հրացանը կողքին՝ պատին հենած: Ես խոհանոցում էի, երբ կես ժամ հետո եկավ եղբայրս՝ Սերոբը: Իմ խոսքերը բանի տեղ չդնելով, մտավ սենյակ: Էլ չիմացա, թե որտեղից էր իմացել, որ Ավետիսը տանն է: Քիչ հետո նրանց միջև սկսվեց մի գրույց-վիճաբանություն: Ժամից ավելի վիճելուց հետո երկուսով դուրս եկան տնից ու գնացին՝ մեկը դժգոհ, մյուսը՝ գործը հաջողածի դեմքով: Երկու-երեք ժամ հետո,- ծանր շունչ քաշելով, շարունակեց խոսքը,- գյուղի վերևը սկսվեց կռիվը, իսկ կես ժամ հետո բերին Ավետիսի դիակը: Միայն նա էր սպանվել կռվի ժամանակ, որը, հետո իմացանք, Սերոբի սարքած գործի պատճառով էր սկսվել: Գյուղի վերևը, անտառի եզրին, կար աչքի ընկնող, գեղեցիկ մի ծառ, որը

Սերոբը կամեցել էր կտրել: Բայց ինչի՞ համար, ի՞նչ նպատակով, երբ կորցրել էինք ամեն ինչ, այն ծառը մեր ինչի՞ն էր պետք, մեզ անհայտ մնաց: Անհայտ մնաց և այն, թե ի՞նչ պատճառաբանությամբ համոզեց այն հոգնած ու քնատ մարդուն, որը գնաց նրա հետ: Իսկ երկրորդ օրը, հուղարկավորությունից առաջ, իմ ականջին հասավ, որ Ավետիսը սպանվել է Սերոբի գնդակից: Բայց մեր խմբում կար մի մարդ՝ Հարությունը, որն ամուսնուս հավատարիմ զինակիցը լինելուց բացի, մեր տան ամենամոտիկ բարեկամն էր, նա ինձ համոզեց, որ սուտ է այդ լուրը, Ավետիսը զոհվեց թշնամու գնդակից:



եկել են քո մոտ»:

Տիրեց լռություն: - Որ այդքան շատ ես ուզում, ես կպատմեմ բոլորը,- սկսեց խոսել Աննիկ մորաքույրը,- բայց ասա տեսնեն, թե քեզ ո՞վ ուղարկեց մեր տուն, ինչպե՞ս գտար ինձ:

Ես պատմեցի ամեն ինչ: Կրկին տիրեց լռություն և քիչ հետո շնորհակալություն հայտնելով Քարգուհի քույրիկին, ասաց.

- Դեհ, որ հետաքրքիր է, լսիր,- և սկսեց պատմել, ավելի շուտ շարունակեց իրենց կյանքի պատմությունը... Կես ժամից ավելի պատմելով Եղեռնի օրերին իրենց կյանքի մասին, ֆիդայիների մղած կռիվների և կռիվներում զոհվածների մասին, իր խոսքը վերջացրեց այսպես.

- Մի օր էլ գյուղի մոտ կրակոցներ լսվեցին՝ կռիվ տեղի ունեցավ թուրքերի և մերոնց միջև, իսկ կես ժամ հետո զինակիցները տուն բերին ամուսնուս դիակը...- կրկին լռեց Աննիկ մորաքույրը: Ես էլ լուռ էի. վերջացել էր նրա պատմությունը, բայց հարցը մնում էր անպատասխան: Այլևս չէի կարող փորձել նրա արձանագրող հուշերը, իսկ վեր կենալ ու գնալ չէի ուզում՝ հարցը չէր պարզվել: Եվ այսպիսի ծանր լռության մեջ Աննիկ մորաքույրը ասաց.

- Բայց...,- և կրկին լռեց: - Բայց ի՞նչ,- չուշացրի հարցնել, չէր կարելի առիթը բաց թողնել: Եվ այն, ինչը չէր պատմել, ավելի շուտ, չէր կարողացել պատմել, սկսեց պատմել... - Տասնութ թվին ներում էր եղել քրիս-


տան: Եվ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ միանալով ֆաշիստներին, որոնք հասան Կուբան, նրանց հետ էլ գնացել է արտասահման, անցել Փարիզ: Իսկ հիմա կենդանի է, թե սատկած՝ չգիտեմ, չեն էլ ուզում իմանալ...

Լռեց Աննիկ մորաքույրը՝ այլևս խոսելու անտարամադիր հայացքը հառելով դեմքիս: Ես վեր կացա, կրկին ներողություն խնդրելով նրանից, շվար ու մոլոր գնացի: Իսկ նա տեղից չշարժվեց՝ միայն ծանր հայացքով ուղեկցեց ինձ...

Հարգարժան Թուրքլյան, հիշատակիդ առաջ ներում են խնդրում, բայց կարծում են Սերոբը Ձեզ էլ է խաբել, որ խմբապետներից միայն իրեն ու Գալուստին է հաջողվել հեռանալ Թուրքիայից: Եթե կուզեք ճիշտը, նրանք իսկական խմբապետներ չեն եղել, որոնց մարդիկ հավատարիմ, վստահեին, կռվեին նրանց ղեկավարության տակ: Իսկական խմբապետներ եղել են ներքոհիշյալ մարդիկ՝ Ջիլ Հովհաննեսը՝ Հովհաննես Չեյթուրյանը, որը դավադրությամբ սպանվեց Թեք-Քիրեզ գյուղում, Կարախաչիկը՝ Խաչիկ Կարապոլյանը, որն սպանվեց Կոջաման գյուղի իմամի տանը, ուր հրավիրվել էր խորհրդակցության և ոչ թե քեֆի, ինչպես նշվել է Հովակիմ Հովակիմյանի (Արշակունի) «Պատմություն հայկական Պոնտոսի» (Բեյրութ, 1967թ.) գրքում: Նույն տեղում նշվում է նաև, որ Չարյանը կռվի ժամանակ վիրավորվում է և մահանում իր տեղը թողնելով Սերոբին: Այդ էլ ճիշտ չէ, քանի որ տասնյակ ֆիդայիներ և Սերոբի քույրը, որը Չարյանի կինն էր, պատմում էին ուրիշ ձևով, որոնց, որպես ակնառատ-վկայների չհավատալը հանցագործություն է: Կոջաման գյուղում Խաչիկի հետ էին հույն խմբապետ Սարու Յանին և ինը ֆիդայիներ, որոնցից միայն Թոքմաքչյանին է հաջողվել ազատվել սպանից: Ավետիս Չարյանը, որի մասին կարդացիք: Կարապետ Կարդանյանը՝ Վաշտոնոլլին Եղեռնի սկզբից մինչև 1923թ. ղեկավարել է ամբողջ Օրդուի շրջանի ֆիդայիներին ու փախստականներին՝ միշտ կապ ունենալով խմբապետներ Սեդրակ Մինասյանի՝ Մինասոլլու, Բոստանջյան Սեդրակի, Կազանջյան Սարգիսի (որի մահից հետո նրա գործը շարունակել է որդին՝ Արթինը), Արզումանյան Արթինի և Երիցյան-Քեշիշյան Գալուստի հետ, որոնք շատ անգամ առանձին-առանձին էին գործում, իսկ կարիքի դեպքում միանում էին, կազմում մի ընդհանուր ուժ՝ Կարդանյանի հրամանատարության ներքո, որը կռվեց թուրքական զորքերի ու չեթեների դեմ, իսկ 1923թ. գարնանը իր հետ առնելով հարյուր չորս ֆիդայիներ ու փախստականներ, հասավ Ադլերի մոտ Վեսյոլոյե գյուղի ափերը: Չարյանբացի Ակոպոսը՝ Հակոբ Քեյխյանը առաջին անգամ Աբխազիա է եկել 1916թ., իր հետ բերելով մի խումբ ֆիդայիների ու փախստականների: Հետո իր զինակիցների հետ գնացել միացել է Անդրանիկ զորավարի զորքին, իսկ Անդրանիկի արտասահման գնալուց հետո, կրկին վերադարձել է Չարյանբա, իսկ 1923թ. իր հետ առնելով մի խումբ քրիստոնյաների, կրկին եկել է Աբխազիա:

Այդ երկու խմբապետները մինչև իրենց կյանքի վերջն ապրել են որպես պատվավոր մարդիկ՝ Ակոպոսն Աֆոնի վերևում գտնվող Խուստոկ-Ամուխվա գյուղում, ուր և նրա տնամերձում, ըստ աբխազական սովորույթի, գտնվում է իր շիրմը: Նա մահացել է 1952թ.: Իսկ Կարապետ Կարդանյանը ապրել ու մահացել է Գագրայում՝ 1950թ.: Նրա շիրմը գտնվում է Գանթիադիից Ադլեր տանող նոր մայրուղու կողքին գտնվող գերեզմանոցում, իր քրոջ՝ Սափերի և փեսա Արզումանյան Արթինի շիրմների կողքին:

Ցավոք, ժամանակին, երբ դեռ ողջ էին համշենահայերի 1915-1923թթ. հերոսամարտերի հազարավոր ականատեսները, գրի չառնվեցին նրանց հուշերը: Սակավաթիվ գրառումներն էլ արվեցին դեպքերից տասնամյակներ անց և այժմ շատ դժվար է գտնել չորր թացից, ճանաչել իրական հերոսներին ու նաև նրանց, ովքեր արժանի չեն հերոսի կոչման: Ես փորձեցի ճշտել այդ արյունոտ անցյալի ընդամենը մեկ դրվագը, բայց պատասխանատվությունը ճշմարտության առջև ինձ պարտավորեցնում է դիմել համշենահայերի ֆիդայական շարժումն ուսումնասիրող անձանց, նաև նրանց, ովքեր իրենց տանն ունեն այդ տարիների մասին պատմող ականատեսների խումբացած հուշատետրեր, օգնելու պարզելու, թե ինչպես է գոհվել խմբապետ Ավետիս Չարյանը:



1971-73թթ. հիշարժան են իմ կյանքում: Ես Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտին կից գրականության բարձրագույն դասընթացների ունկնդիր էի: Բնակվում էի հիշյալ ինստիտուտի Դոբրոլյուբովի փող. 9/11 հասցեում գտնվող համրակացարանում, ուր ապրում էին և՛ դասընթացների ունկնդիրները, և՛ ինստիտուտի

Յուրի Սահակյանը ծնվել է 1937թ. Լեռնային Ղարաբաղի Չայլու գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ծառայել է բանակում: Այնուհետև սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում (1961-66թթ.): Աշխատել է Երևանի հեռուստատեսության ստուդիայում, «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթում, «Սովետական գրող» և «Արևիկ» հրատարակչություններում: Առաջին գիրքը լույս է տեսել 1966 թվականին: Հայաստանի Գրողների միության անդամ է 1968-ից: Հրատարակել է շուրջ 30 ամուսն գիրք՝ մեծերի ու փոքրերի համար: Հեղինակ է բազմաթիվ երգերի տեքստերի:

ուսանողները: Տարբեր հանրապետություններից եկած բազմաթիվ տաղանդավոր երիտասարդներ հմտանում էին թարգմանական արվեստի մեջ: Նման խմբեր կային Հայաստանից, Աբխազիայից, Օսեթիայից, Խորհրդային Միության տարբեր ծայրերից: Ես շատ ընկերներ ծեռք բերեցի, բայց ամենից շատ մտերմացա արխազ երիտասարդ բանաստեղծ Գեոնադի Ալամիայի հետ: Մեզ ծանոթացրեց նույն ինստիտուտում սովորող հայ թարգմանիչների խմբի անդամ Ջուրաբ Նալբանդյանը: Ջուրաբին գիտեի Երևանից, գիտեի նրա հրաշալի ուստիմը՝ Սիլվի Ստեպանովային: Բախտ են ունեցել լինել նրա հյուրընկալ տանը, վայելել նրա ջերմ հյուրասիրությունը, լսել նրա հիշողությունները դարասկզբի գրական անցուղարձի, ճանաչված անհատների մասին: Ի դեպ, Սիլվի Ստեպանովան Բուլատ Օկուլչայայի մոր՝ Աշխենի հարազատ քույրն էր...

Մտերմությունը արխազ ուսանողների՝ Էթերի Բասարիայի, Դենիս Չիխալիայի և մյուսների հետ շատ դյուրին ու բնական ստացվեց: Մարդկանց շատ հաճախ մոտիկացնում են ոչ միայն անձնական հատկանիշները, այլև՝ ճակատագրերի ու ազգային պատմության մանուկությունները, ինչ-ինչ բաների նկատմամբ ցուցաբերած համանման մոտեցումները... Հետագայում ևս, հետմոտկվյալ շփման տարիներին, մենք նոր ընկերներ էինք «փոխանցում» իրար: Այդպես Գեոնադին նոր ընկերներ ունեցավ Երևանում: Նրան թարգմանեց և «Գրական

թերթում» տպագրեց Իզմատ Մամյանը: Մանուկների համար գրված իմ բանաստեղծություններից մի քանիսը թարգմանվեցին ու տպագրվեցին արխազական մանկական մամուլում: Ստեղծվեց «Աբխազական ասիեր» բանաստեղծությունների շարքը: Հետագա փոխայցելությունների ժամանակ ես ծանոթացա բանաստեղծուհի Նելլի Թարբայի, արձակագիր Ալյոշա Գոգուայի հետ, որը, իմիջիայլոց, հիացած էր Հրանտ Մաթևոսյանի «Գոմեշով» և հարցուփորձելով կամենում էր ավելին իմանալ հեղինակի մասին: Ծանոթացա դեռևս պատանի բանաստեղծ Ստանիսլավ Լակոբայի հետ: Նա ինձ նվիրեց այդ տարի (1985թ.) նոր լույս տեսած բանաստեղծությունների առաջին փոքրիկ, «Օպրոկինուտոն» վերնագրով ժողովածուն: Առաջին գրքից դատելով, պիտի ենթադրեի, որ նա նշանակալից գործեր ստեղծած կլինի հաստատ: Խորհրդային միապետության փլուզումից հետո, վրաց-արխազական պատերազմից հետո, Հայաստանի շրջափակումից հետո մեր փոխայցելությունները ընդհատվեցին: Սակայն հուսով եմ, որ այդպես երկար չի մնա:

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

### ԱԲԽԱԶԱԿԱՆ ԱՓԵՐ

\*\*\*  
Փոքրիկ քարեր ծովեզերքից  
Իմ սեղանին փոքրիկ,  
Չնչին տողեր ծովի երգից-  
Ավարտում ու գողտրիկ:  
Ամեն մի քար՝ ծովի նվագ,  
Կամ՝ նվագի բեկոր,  
Որ շառաչում մի լուռությամբ  
Ինձ են նայում հերթով:  
Ես ի՞նչ ունեմ նրանց տալու-  
Լուս սիրահար մի սիրտ,  
Որ փշրում ու հղկում է հար  
Կապանքները իր բիրտ,  
Որ երգեր է աշխարհի հանում  
Ակունքներից գոյի,  
Ինչպես քարերն այս հմայուն՝  
Շուրթերի մեջ ծովի:  
1978թ.

**ԱԲԽԱԶՈՒԴԻՆ**  
Հղացումի նման  
Եկավ նստեց մոտիկ:  
Ես լսեցի հանկարծ  
Հիացմունքը խոտի:

Խոտը խոտին ասաց.  
- Այնպես արա, հոգիս,  
Որ մաքրությունը այս  
Արձակի իր գոտին:

Խոտը խոտին ասաց.  
- Այնպես արա, իմ սե՛ր,  
Որ մենք նրա մարմնի  
Ցնծությունը կիսենք,

Որ նա սուզվի մեր մեջ  
Երազի պես մաքուր,  
Ինչպես հեռու սիրո  
Չնաշխարհիկ ավիում...

Հղացումի նման  
Եկավ նստեց մոտիկ...  
Գուցե մի խաղ էր սա  
Կարոտի և օղի,

Որ ծնվում է բոլոր  
Աչքերի մեջ բարի,  
Կանգնած ամենագոր  
Սիրո ճանապարհին:  
1978թ.

### ԵԹԵՐԻ ԲԱՍԱՐԻԱՅԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՏԱՆԸ

Կայծոռիկներ...  
Մարգերի մեջ,  
Խոտերի մեջ հին բակի,  
Բազմանում են աչքերիս դեմ-  
Կրկնակի, քառակի:  
Ինչքան մութը խտանում է,  
Այնքան նրանք շատանում -  
Թռչկոտուն են ու խենթանում են,  
Լույս են բերում ու տանում:  
Բառերը իմ նրանց դիմաց  
Թվում են զուր ու անզոր,

Նրանք փոքրիկ,  
Չնչին,  
Միջատ,  
Բայց լուսատենչ ու հզոր...  
Ելնում, իջնում, բարձրանում են  
ճի՛գ են անում դեպի վեր  
Եվ թվում է բակի փոքրիկ  
Նույնպես բացում է թևեր,  
Եվ թվում է ահա, ահա  
Մեզ էլ կառնի-կտանի...  
Բայց պայթում է բակի վրա  
Մի խուլ ամպրոպ ու քամի,  
Եվ անձրևը տեղատարափ  
Շփվում է խենթի պես,  
Ու մարում են կրակները,  
Կայծոռիկները իրկեզ...

Ու մարում է բակը փոքրիկ,  
Անձրևն՝ անկոչ այցելուն,  
Բայց լողում են ես մտովի  
Հենց նոր մարած կայծերում:  
1978թ.

### ԴԻԱՍԿՈՒՐԻԱ

Այս քաղաքը Սև ծովի և պատմության  
գաղտնիքն է: Քիչ բան է հայտնի նրա մասին:  
Թերևս միայն այն, որ քաղաքն այդ գոյու-  
թյուն է ունեցել և, ավելի քան 2500 տարի  
առաջ, անցել է ծովի հատակը: Սուխումի մո-  
տակայքում, ծովափին դեռևս պահպանվել  
է քաղաքային պարիսպների մի մասը:

Դիասկուրիա,  
Քաղաք,  
Դու այնքան ես լռել,  
Որ հիմա հիշելու ոչինչ չունես:  
Ինձ հայտնի չէ ոչինչ ապրած կյանքիդ  
մասին,  
Ծեր արխազի այս հին, շատ հին երգից  
բացի:

«...Կար ժամանակ, կար մի քաղաք,  
Այդ քաղաքում – քաղաքացիք.  
Ապրում էին նրանք խաղաղ  
Ու գոհ էին իրենց կյանքից:

Սակայն եղավ դժբախտ մի օր  
Ու քաղաքի պարսպի դեմ  
Կանգնեց տգեղ ու ահավոր  
Ծովից ելած կապույտ մի դև:

Սպառնաց նա պարսպից ներս  
Ու պահանջեց օրը մի գոհ  
Եվ իրկիզեց մի քանի տուն  
Բերնից ժայթքող կապույտ բոցով:

Ով տրտնջաց՝ զրկվեց զլիսից.  
Ով դեմ ելավ՝ նույնը եղավ,  
Եվ օրեցօր քաղաքացիք  
Դևի կապույտ գույնը առան:

Խենթերն իրենց չփրկեցին,  
Վախկոտները խելքացան.  
Նրանք այնքան շատ լռեցին,  
Որ մի օր էլ ձկներ դարձան:

Եվ կապույտը խուժեց քաղաք,  
Ամեն փողոց ու ամեն տուն  
Եվ այնտեղ, ուր քաղաքն էր այդ,  
Հիմա ծովն է աղմկում...»  
1972թ.

### ԳԵՆԱԴԻ ԱԼԱՄԻԱՅԻՆ

Աբխազ իմ ընկերոջ տխուր աչքերի մեջ  
Ծովը հազարամյա երազներ է ցանում:  
Ծովերի հետ վաղուց չունեմ ես  
ոչ մի վեճ  
Իմ քարքարոտ ու չոր, տոչոր  
Հայաստանում:

Մենք գինի ենք խմում ծովից մի  
քիչ հեռու  
Եվ ափերը դանդաղ սկսում են ճոճվել  
Ու ճոճվում ենք կարծես փափուկ  
ալիքներում,  
Գառների մեջ կապույտ, փրփրապեղ...

Խմիր, եղբայր, խմիր: Արյուններից  
մեր հին  
Քերենք ժանգը վշտի ու շարտենք  
քամուն:  
Խմիր ու տես, արդեն, հորիզոնում ծովի  
Մեր պապերի սուզված նավերն  
են բարձրանում:  
1974թ.

\*\*\*  
Երկրի մարմինը տաք է ու հին,  
Ապրում է իր հին օրենքներով,  
Պոկվում է մութից տառապագին,  
Ու փարվում լույսին երախտավոր:

Օրը լցվում է լույսի հեղով,  
Ինչպես որ սիրտը՝ սիրով անափ  
Ու ծավալվում է ծովեզերքով՝  
Որսալու սրտեր, մտքեր սթափ:

Եվ ոչինչ կարծես պակաս չկա.  
Կյանք է, ծիծաղ է, հոգս ու երգեր,  
Թե քո արյան մեջ նրան գտար,  
Անհնար է քո գոյը հերքել...  
1978թ.

\*\*\*  
Ես Աստված չեմ արդարադատ,  
Բնավ հակված չեմ հեզմանքի,  
Սակայն գիտեմ. ամեն մի մարդ  
Ծնունդն է իր տառապանքի:

Հաստատ գիտեմ. ծովը՝ ծովի,  
Գետը ունի գետի հմայք:  
Հասկանում են արարողին,  
Որ սրտի տեղ չի դրել վարդ:

Սիրտը սիրտ է, կոհմանա  
Թեկուզ լեռներ իջնեն վրան...  
Պետք է միայն չնչին մի հույս,  
Որ մերթնդմերթ հայտնվի նրան:  
1978թ.

\*\*\*  
Ով ետ դարձավ ավեր բերդից  
Չմտածեց երբեք,  
Ոչ նրանից մի քիչ այն կողմ  
Կար ավերակ մի երգ:

Որ երզը այդ դարեր երկար  
Եղել է տան մի պլուն,  
Եղել է ծիգ ու հպարտ,  
Հոգս ու սիրով լեցուն:  
Նա ապրել է շուրթերի մեջ,  
Մեջքերի մեջ ուղիղ,  
Արշավել է առանց ոխի  
Եվ առանց երկյուղի:  
Նա ապրել է զինվորի պես,  
Չհնվորի պես ընկել  
Եվ ընկել է մարտադաշտում  
Մենակ ու անընկեր:  
Ընկել է նա, որովհետև  
Շուրթ չի եղել պահող,  
Որովհետև շուրթը պահող  
Նույնպես դարձել է հող...  
Ով ետ դարձավ ավեր բերդից  
Նա չտեսավ երբեք,  
Որ խարխուլված հիմքի տակից  
Բարձրանում է մի երգ,  
Բարձրանում է կանաչ, թեթև՝  
Արևին ու շողին,  
Որպես երդում անմահ սիրո,  
Որպես երդում հողին:  
1978թ.

### ԱՄՐԱ

Ավանդությունը արևի դուստր Ամրայի  
արցունքներին է վերագրում Ռիցա լիճ տա-  
նող ճանապարհին գտնվող Կույսի ար-  
ցունքներ ջրվեժը...

Ես տեսա նրան ոչ արտասովելիս,  
Ոչ խուճապի մեջ և ոչ էլ վախի,  
Մի խեղճ առասպել վազում ետևից,  
Ուզում էր նրա ընթացքը կանխի...

Իսկ նա, հերարձակ, կայծկլտուն  
մի կին,  
Կրակի մի խուրճ գրկի մեջ պահած,  
Բոց էր նվիրում հին օջախների  
Տխրության միգուն մարած ու սառած:

Հուր էր բորբոքում ու քայլում թեթև  
Հպարտ լեռներով, ծորերով խորունկ,  
Եվ երդիկներից ծուխ էր բարձրանում,  
Եվ ծուխը երգ էր դառնում մի ծորուն.

«Մեռեք, բայց օջախ մի թողեք մարեն,  
Միշտ բորբոք պահեք արևի նման,  
Օջախի շուրջը պիտի ծվարեն  
Երկրի գալիքը և ոգին անմահ:  
Ես սերն եմ միակ ու անմրցակից,  
Դուստրը արևի ու սուրբ հավատի.  
Չեմ թողնի, որ ձեր խորքերը անհուն  
Անհուն տխրության մութը ծվատի:

Եկեք, մոտեցեք ու սրտերը ձեր  
Մեկնեցեք իմ բորբ ու մաքուր հրին,  
Որ լույսը անվերջ կրկնվող իմ մոր  
Ձեր պայծառացող դեմքը համբուրի...»

Ես տեսա նրան ոչ արտասովելիս,  
Ոչ խուճապի մեջ և ոչ էլ վախի,  
Մի խեղճ առասպել վազում ետևից,  
Ուզում էր նրա ընթացքը կանխի...  
1985թ.

ԱՆՅՅԱԼԻ ՄԱՄՈՒԼԻՅ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Տարիներ շարունակ հայաստանաբնակ համաշխարհային տարիներին մեկ անգամ որևէ տոնական առիթով հավաքվում էին Երևանի ռեստորաններից մեկում, իրարից հարցուփորձ անում, նոր ծանոթություններ հաստատում և մի քանի հարյուր հոգով ուրախանում, քեմենչեի հնչյունների ներքո երգում ու պարում:

Բայց Արցախյան ազատամարտի, ահավոր երկրաշարժի ու էներգետիկ ճգնաժամի տարիներին այդ ավանդույթն ընդհատվեց: Եվ ահա, մոտ երկու տասնամյակ անց Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական հ/կ նախաձեռնությամբ Ամանորի և Սուրբ Ծննդյան առիթով 2005թ. դեկտեմբերի 18-ին Երևանի հայտնի ռեստորաններից մեկում՝ «Պիրամիդայում» էին հավաքվել 50-ից ավելի համշենահայեր ու հյուրեր, Երևանի բուհերում սովորող արխագահայ ուսանողներ, որոնք քեմենչեի Նշան Ֆերմանյանի նվագակցությամբ համշենյան շուրջպարերի ընթացքում հնչեցրին տարբեր երգեր, ուրախ ու սրամիտ սընհներ: Բոլորի ցանկությունը մեկն էր՝ վերականգնել հին

ավանդույթը և տարին մեկ-երկու անգամ հավաքվել ուրախ սեղանների շուրջ:

Ողջունելով այդ ցանկությունը, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական հ/կ խորհուրդը ցանկանում է իր շնորհակալությունը հայտնել այս հավաքի նախաձեռնողին՝ խորհրդի անդամ Սաթիկ Միսակյանին, ինչպես նաև Վայոց Ձորի Արեմի գյուղի գինու գործարանի տնօրեն Միքայել Գրիգորյանին՝ սեղանները «Արեմի գյուղի» գինիներով առատորեն զարդարելու և սփյուռքահայ տեր և տիկին Վարուժան և Անի Մինասյաններին «Համշեն» հ/կ-ին 50 դոլ. նվիրելու համար:



ՄԵՐ ԾԽԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Անուխվա (Սուխ. շրջ.) Սուխումի շրջանի ժողովուրդը մի ինքնահատուկ վերաբերմունք ունի դեպի դպրոց:

Դպրոցը սիրում են և պահում: Դպրոցը իբրև անհրաժեշտություն կա և ապրում է. ոչ ոք չի համարձակվի հերքել նրա գոյությունը. «Ուսումնարան չեն ուզում» ոչ ոքի մտքով չի անցնում. հասկանում է են, որ «մաքաբին» հոգաբարձու պիտի, վարժապետ պիտի, փարա պիտի, ծառա պիտի և այլն:

Ապա ինչո՞ւ չկա առաջադիմություն և կատարելագործություն: Անվերջ քայքայում, քարշ եկող թշվառ գոյություններ...

Ընթերցողին կառաջնորդեն դեպի այն երկարամյա ծխ. դպրոցը, որի ուսուցիչը լինելու դժբախտությունն են ունեցել:

Դա հայտնի, ազնվական Շիրվաչիձեի արեմդատորների սիրած ու երբեմն պայծառացած դպրոցն է:

Դեռ հեռավոր կնկատեք կիսախարխուլ դպրոցական շենքը: Թափված է ծեփը, ջարդված են ապակիները. մաքրության մասին չխոսենք, որովհետև դա վաղուց արհամարհված շռայլություն է մեր դպրոցի համար: Նոյեմբերի վերջն է. ներս մտնենք դասարան. նստարանների վրա ցրտից դողում են ավելի քան 70՝ 8-15 տարեկան աշակերտներ: Ըստ երևույթին աշակերտների հետ նույնպես մրսող ուսուցիչը արագ-արագ խոսում է և անցուդարձ անում:

Կրթական մասը նույնպես շատ վատ է կառավարվում: Ուսումն սկսվում է սեպտեմբերի վերջից, կամ նույնիսկ հոկտեմբերից: Ընդունելության սեզոնը սովորություն է դառել երկարացնել մինչև դեկտեմբեր:

Ընդդիմությունը ուսուցչի կողմից՝ նրա լինել-չլինելու խնդիրը առաջ կբերի. չէ՞ որ բոլորի հայրերն էլ «մաքաբին» փարա են տալիս. կուզի շուտ կգա, կուզի ուշ. վարժապետի ի՞նչ գործն է:

Դե արի ու ծրագիր իրականացրու, միօրինակություն մտցրու թեկուզ նույն դպրոցի կյանքի մեջ. 70 աշակերտներից սկզբի ամսում ունեցել ենք միայն 40-ը: 30-ը, ուրեմն մոտավորապես կեսը ավելացել են նոյեմբերին, նույնիսկ, դեկտեմբերին էլ ընդունվողներ են եղել. իսկ ուսումը կանգ է առնում մայիսի սկզբից, երբ դաշտային աշխատանքների պատճառով աշակերտները չեն գալիս դպրոց: Հաշվեցեք արժանավորները, տոները, գումարեցեք վատ եղանակի պատճառով երկու շաբաթ երկարած ակամա արձակուրդը և միայն այժմ հասկանալի կդառնա թե ինչու աշակերտների մեծամասնությունը, որոնք դպրոց են մտել 8 տարեկան հասակից, 15 տարեկան են և դեռ չեն կարողանում ավարտել գ-րդ բաժանմունքը:

Այս դրության մեջ են այն ժողովրդի զավակները, որը ոչ իր սերը և ոչ դրանք չի խնայում դպրոցին:

Ժողովրդի դեպի դպրոցը տածած սերը, անշուշտ վերջինիս գոյության առաջին գրավականն է: Սակայն միայն սիրելով չի բարեկարգվում դպրոցը. երբ բացակա է խելացի, գիտակցական վերաբերմունքը, այն ժամանակ դպրոցի գոյությունը լուկ անվանական է դառնում:

Ժողովուրդը ձգտում է շատ մոտիկ

կանգնած մնալ դպրոցին. ինքն է որոշում վարձել ուսուցիչները, որոշել ռոճիկները:

Բայց գյուղը չգիտե և չի ուզում ճանաչելով ընտրել. գյուղացիք առհասարակ ընտրելու հետ զուլխ չունեն:

Ինչ վերաբերում է դպրոցի համար ուսուցիչ ընտրելուն, դրա համար էլ նույնը պիտի ասել. ծխականները ման են գալիս էժան վարժապետի. երբեմն ըստ մոդայի՝ «քանի՞ տարվա փորձառություն ունես» են հարցնում: Այդ էլ, իհարկե, սակարկության խնդիր է, երբ թեկնածուն դժբախտություն է ունենում նորավարտ լինելու:

Իսկ, եթե նույնիսկ, դիմողը միջնակարգ դպրոցի մասին դեռ գաղափար անգամ չի ունենում, բայց առաջարկում է իր ցուցակ ծառայությանը (տիրացություն՝ եկեղեցում և օգնական-վարժապետություն՝ դպրոցում) մի 300ռ. տարեկանով, այն ժամանակ հավանություն են տալիս: Էլ նրանց ինչի՞ն է պետք թե դասատուն գուրկ է իր ավանդած առարկաների վերաբերյալ տարրական գիտելիքներից անգամ, գաղափար չունի կրթության ու դաստիարակության մասին և իր անհատական կենցաղով, միստ ու կացով ավելի չէ մի գյուղացուց: 2՞ որ իրանք էլ գյուղացի են:

Ընտրված ու վավերացված հոգաբարձուները բացարձակապես չեզոքացել, հեռացել են դպրոցից:

Մի քանի ապօրինի նորընտիրներն էլ զուրկ են գործելու կարողությունից:

Ժողովուրդը ինքն է ուզում անձանք կառավարել. ամեն մեկը մի զուռնա է փչում. յուրաքանչյուրը իրավասու է՝ հրամայելու, իշխելու. դրա շնորհիվ օրական մի անախորժություն, Բաբելոնյան խառնաշփոթություն:

Սակայն այս բոլոր թայֆայական պառակտումների ու աղմուկների մեջ կա խորին ակնածություն և պատկառանք դեպի դպրոցի բարձրագույն տերը՝ Էջմիածինը:

Դպրոցին կարեկցողները, չգիտեն ինչու, միշտ մխիթարում են իրանց այն հույսով թե այնքան չտեսնված ու չսոված են իրանց աղմուկները, որ անպայման հասած կլինեն Էջմիածին կամ Թիֆլիզի Առաջնորդին. և երանի թե վերջիններս լսեին այդ բոլորը, այն ժամանակ իրանք կունենային և կարգին ավարտ ուսուցիչներ և հոգաբարձուներ:

Սակայն Հոգևոր իշխանությունը համարյա ոչինչով զգացնել չի տալիս իր գոյությունն իսկ դպրոցների համար:

Եվ այս բոլորը միայն մի դպրոցի չէ վերաբերում: Ընդհակառակը: Շատերից մեկն է դա:

Տարբերություններ այս ու այն դպրոցի մեջ, անշուշտ, կան. մի տեղ կգտնենք մի քանի ինտիլիգենտներ, մյուսում ոչ. մի տեղ գործը նոր են սկսում, ոգևորված են դեռ, եռանդուն են, մյուսում արդեն սառել են, քանդվում է:

Սակայն երևույթը շրջանիս մի խոշոր մասի համար ընդհանուր է: Այսօր շինվող դպրոցը նույնպես պետք է վաղը քանդվել սկսի, եթե ամեն ինչ մնա տգետ գյուղացիության խնամքին, եթե չլինի կողմնակի միջամտություն:

Խ. Տ.-Ա.  
«Հորիզոն», Թիֆլիս, 1911,  
N 56, մայիսի 6

2005 Ն ՀԱՄԱՆԵՆԿԱԿԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն:  
Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374+10) 25 21 26:  
Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.:  
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է:  
“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ)  
Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван)  
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЫАН  
Газета распространяется бесплатно.  
“HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan).  
“DZAYN HAMSHENAKAN”. Editor in chief SERGEY VARDANYAN  
E-mail: dzaynhamshenakan@yahoo.com